



# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Է. — ՇՐՋԱՆ ԻԱ. 1889 ՏԱՐԻ ԻՅ. ՅԱՒԷԻՍՔ 31

## ԿՐՕՆԱԿԱՆ



ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՅՏԵՆՈՒԻԼՆԻ ԱՋԳԼԵՐԻ ԳԼԻԻՆ ԵԿԱԾԻ  
ՅԻ ԳՋԼԻՔՆԵՐԻ ՄԷՋ.

Ներդրակալ եղէք Տիրոջն ու քարոզիցէք Նորա անուէր,  
պատմեցէք ազգերի մէջ Նորա արած գործն: (Սաղմ. ՃԵ, 1:)

Աշխարհիս Տէրն երեք կերպով է յայտնել իրան մաշկանացու  
մտրոցը, — և այս կայր ազգը համարձակուում է այդ մասին  
կասկած ունենալ: Նա յայտնել է իրան իբրև Արարիչ, մեզ շրջա-

պատող բնութեան հրաշալիքների մէջ. նա յայտնել է իրան իբրև մարդկային ազգի Հայր՝ Յիսուսի Գրիստոսի միջոցաւ. նա յայտնել է իրան իբրև յաւիտենական նախախնամութիւն՝ մեր մէջ ամենայեօթինի որպէս և բոլոր մարդկային ազգի գլխին եկած ու գալիքի մէջ: Բնութիւնը, «որքէ գիրքն և ոչխարն» պատճառով սուրբ և վաւերական վկայութիւններն են, որ վկայ են նրա մեծութեանը, սիրոյն ու խնամքին:

Երբոր աչքս գցում եմ մահկանացու մարդոց վրայ, որ իրանց այլ և այլ լեզուներովն ու կերպարանքովն աշխարհիս երեսին բնակուում են, մի զարմանալի խառնուրդ եմ տեսնում, պարզութեան ու մեծ նրբութեան՝ կամ կատարելագործութեան, կրթութեան ու անկրթութեան, մաքի լուսաւորութեան ու վայրենութեան. բայց ամեն տեղ էլ միևնոյն ժամանակ տեսնում եմ նրանց մէջը գտնուած շատ իմաստուն և ազնիւ մարդոց ջանքն, որ ունեցել են միշտ՝ ուրիշներին մոքով ու սրտով բարձրացնելու և կատարելութեան տանելու:

Շատ հին ժամանակների մէջ՝ իբրև միգի մէջ տեսնում եմ անյայտ ազգեր, որ աշխարհումս բնակուել ու ապրել են: Նրանք պէտքեր քիչ են ունեցել. երկիրն, որի վրայ ապրել են, իրանց ապրուստը տուել է, ուզում եմ ասել, իրանց սնունդն ու հագուստը: Բայց թէև չեն ունեցել, կամ իրանց յայտնի էլ չեն եղել այժմեան արհեստներն ու գիտութիւններն, որ հազարաւոր տարիների փորձառութեան ու մտածողութեան պտուղնիր են, էլի ունեցել են մարդոց ամենաբարձր յարաբերութիւնների մասին բաւական մօտեցող գաղափարներ: Նրանք հասկոնում են եղել մի մի բան բնութեան օրէնքներից, որ կան երկրիս վրայ ու երկնքում, ուր որ աստղերը շարժում են իրանց անփոփոխ ճանապարհներով:

Մարդիկը բազմացել են, գուրս եկել իրանց բնակուած տեղերից ու գաղթել այլ և այլ ուղղութիւններով զանազան կողմեր, ինչու որ Աստուած կամեցել է, որ բոլոր երկրիս վրայ նրանք բնակուած լինին ու հողը մշակած: Որքան որ աւելի հեռացել են իրանց հայրերի առաջուան բնակատեղերից, որչափ որ աւելի մաքառել, մրցել են տարերքի կատաղութեան կամ

երկրի բրտուժեան հետ, այնչափ աւելի նրանց խելքն ու փորձառութիւնն աւելացել է:

Ատուռած տուել է նրանց մի խիստ դաստիարակ—այդ՝ Կարէն է եղել: Կարիքը սորվեցրել է նրանց հնարագէտ լինել, օգտակարը գտնել, սրտեղ որ ծածկուած է եղել, ու զարգացնել իրանց մէջ այն ուժերն, որոնց՝ իրանց մէջ գտնուելուն մասին առաջ տեղեկութիւն չեն ունեցել: Եւ ինչ որ հայրերն իրանց պարզութիւնովը հնարել են, թոռները քիչ քիչ կատարելագործել են: Պապերի իմաստութիւնն՝ իրրեւ զարմանալի մի զրոյց՝ բերնէ բերան անց է կացել ու հասել իրանցից յետոյ եկող սերնդին ու սրանցից՝ աւելի զարգացրած ու հարստացրած կերպով հասել է իրանց զաւակներին, այնպէս որ՝ մեր ժամանակումն ամենօրեայ կեանքից ամենաունտեղեակներն անգամ գիտեն այն ամեն բանն, ինչ որ հազարաւոր տարիներից առաջ ամենաուսեալների զարգացմանը առարկայ կամ մի հազուագիւտ գանձ է եղել:

Նրբոր մի թագաւորութիւն՝ խաղաղութեան օրերում՝ ծաղկել է արուեստների մէջ. իւր հարստութեան փառքովը փայլում է եղել: Բայց հարուստների փառքն ու փայլը շատ անգամ շարժել է իրանցից պակաս յաջողութեան մէջ եղողների նախանձն. հարստացած ժողովրդի գոռոզութիւնն՝ իրանց իշխանութեան լծի տակ քցածների ընդդիմութիւնն է առաջ բերել. ղեղխութիւնով ու անառակութիւնով՝ իրանց վարք ու բարքի որպէս և սովորութիւնների դէպի վատը փոխուիլը, փչանալը՝ աւելի է տուել, որ բոլոր տեղացի բնակիչներն՝ ինքնասիրութիւնով՝ իրանց շահը պտռեն, և այդպիսով ամբողջ տէրութիւնը քանդուել է: Այդ ժամանակ շատ անգամ անծանօթ երկրներից վայրենի ազգեր պատերազմով յարձակուել են՝ ու իրանց վրայ ամենեւին թանկ չի նստել այն որան, որ հեշտութեամբ ձեռք են քցել, և որ մեծ արժէք է ունեցել: Բարբարոսները, հիանալով իրանց ձեռքն ընկած ազգի ու երկրի գեղեցկութեան, ուսման և հարստութեան կախարդանքի վրայ, ամաչել են իրանց անհնարին բրտութիւնից: Իրանք էլ մասնակցել են յաղթուածների ունեցած բարիքին ու լուսաւորել են

իրանց միտքն այն ազգի գիտութիւններովն: Այսպէս առաջ և  
գնացել մտքկային մտքի կատարելագործութիւնն ու տարա-  
ժեղ իւր ազգեցեցութիւնն որ իշխանութիւնն աւելի մեծ երկր-  
ների ու ազգերի վրայ:

Այսօր էլ գեռ շատ կան կարճատես մահկանացու մտքիկ,  
որ ախտոնում են անհետանայն երբեմն փառաւոր թագաւոր-  
ութեաների որ արուեստների ու գիտութիւնների մէջ մեծ  
անուն ու պատիւ էին ստացել՝ ու մտամբ մինչև անգամ ներ-  
կայ ժամանակիս էլ գլխաւոր ուսուցիչների փառքն ու պա-  
ռիւն են լայնելում: Այսպիսի մտքիկ առիթ կուեննողին, կար-  
ծիւմ կուսկած տանելու այն փեմ վիճակի վրայ, որ ահմանել է  
Աստուած աշխարհումն մտքկային ազգի համար, ե՞նչպէս  
կարելի է ասում են նրանք, ինչպէս կարելի է Աստուծոյ  
կամքը լինի, որ ազգերը միշտ աւելի իմաստուն, աւելի ազնիւ,  
աւելի սզատ, աւելի բարգաւոր լինին, երբ որ ինքը թոյլ է  
տալիս, որ մի ինքնակոչ՝ յանդուգն աշխարհակալ լուսաւոր-  
եալ ազգերի ամենալաւ բանը, կարճ ժամանակ գոյութիւն ու-  
նենալուց յետոյ, ոչնչացնի նրա համար, որ իւր սիրտն այդպէս  
է ուղում և իւր կամքն պէտք է առաջ տանի: Այն ինչ ասեմ:  
սովեթական Բակի խնամութեան վրայ այդպէս կատարած տա-  
նալիքը չեն մտածում, որ մի ազգի արժանաւորութիւնն ոչ  
թէ նրա սենեցած գիտութիւնն է, կամ ինչքը, այլ նրա քաջա-  
կանաբերութիւնը թիւն չեն մտածում, որ աշխարհիս երեսիցը ջըն-  
ջուած այն բարեւորութեան ազգերն, իրանց անհետանալուց  
առաջ, արդէն փողոց դադարած են են եղել ազնիւ, ազատ և  
խելագէտ բարգաւոր լինելուց, չեն մտածում, որ առանց այդ  
կորստին՝ ոչ Յիսուսի կրօնն այդպէս շուտով կտարածուէր աշ-  
խարհիս վրայ, և ոչ էլ մենք այժմ կուեննայինք այնչափ ազ-  
նուութիւն, որի վրայ այսօր ուրախ ենք:

Մտքկային մտքի ու սրտի կատարելագործութիւնը մի չը-  
հանդուցալ կրտսի է նման, որ ամեն բխտ, վայրենի երկրաւոր  
բանն այրում է ու ոչնչացնում, մինչև որ քանդուած թագա-  
ւորութիւնների իշտականների տակից կրկին առաջ է գալիս  
աւելի պայծառ և աւելի շատ անդ տարածուող կերպով և

վերջապէս բոլոր աշխարհո ընծում ու բոլոր ազգերին լուսա-  
ւորում:

Գեռ շատ հազար տարիներ չեն անց կացել, որ սարսափելի  
բարբարոսութիւն էր տիրում աշխարհիս տոգերի մէջ: Ո՞ւմ  
յայտնի չէ, որ դեռ հազիւ հազար տարի առաջ՝ այժմ՝ քաղա-  
քակրթուած և լուսաւորուած Գերմանիոյ բնակիչներն էլ նման  
էին Ամերիկայի շատ հին անտառների վայրենիներին, իրանց  
չտոտուածներին մարդիկ էին մատաղ անում ուրիշ կենդանի-  
ների նման և ապրում էին աւելի իրանց աւարառութիւննե-  
րով, քան թէ իրանց հոգը մշակելով: Ո՞ւմ յայտնի չէ, որ մի  
քանի հարիւր տարի առաջ աշխարհիս հեռաւոր կողմերում  
բողմութիւ տեղեր կային՝ և այժմն էլ դեռ կան՝ որ նոր են  
սկսում՝ այն էլ սղորմելի կերպով՝ քիչ ու քիչ զարգանալ, բան  
սովորել և ազնուանալ:

Այսօր, որ դու քո տնակիդ մէջ, քո սրտիդ մօտիկ ընտանի-  
քիդ շրջանի մէջ կարողանում ես վայելել կեանքի ախորժակու-  
թիւնն՝ ու շատ կողմից բան չի պակտում քեզ, որ լաւ, ուրախ  
սպրես, ինչպէս որ քո սիրտդ է սեղում՝ որ դու այսօր կարո-  
ղանում ես քո խելքդ գիտութեան լուսով զարգացնել ու լու-  
սաւորել, քո զաւակներիդ հարկաւոր բաները սորվեցնել՝ Աս-  
տուծոյ, բնութեան և աշխարհի վրայ, միթէ չգիտես, որ մի  
ժամանակ երկրի այդ իսկ տեղում, ուր դու այժմ բնակուում  
ես, քո նախնիքդ՝ անտառի կենդանիների նման՝ կաղին էին  
հաւաքում, որ սպրին, այն, գիտես, որ սիրուն գիւղեր և  
բողմամարդ քաղաքներ են շինուած այն տեղերն, ուր որ մի  
ժամանակ ձաճձային անբնակ տեղերում վայրենի ցուլեր էին  
բնակում. իսկ այժմ կիւրակէ օրուան ժամի զանգերն կան-  
չում են մարդոց իրանց երկնաւոր Հօրն երկրպագութիւն անե-  
լու այն տեղերում, ուր որ մի ժամանակ տրիւնաներկ սեղան-  
ները մարդկային զոհեր էին անյագ ուտում. այս ամեն բանը  
հազարաւոր տալիներէից առաջ ազգերի ունեցած վիճակի պը-  
տուղն է, Աստուծոյ ամենիմաստ և ամենառքանչելի նախախնա-  
մութեան, առաջնորդութեան և տնօրէնութեան հետեւանքն  
է: Այստեղ այնպիսի զարմանալի կասով կատուած, հիւսուած

են իրար հետ ամենամեծ բանն ամենափոքրիկ բանի հետ, ամենահեռաւոր բանն ամենամերձաւոր բանի հետ, շատ վաղուց անց կացածն՝ ամենահեռաւոր ապագայի հետ՝ որ մարդուս խելքն երբէք բոլորը լաւ ըմբռնել, երբէք կատարելապէս քըննել ու հասկանալ չէ կարող: Այս տեղ է, որ Աստուածութիւնն իւր իմաստութիւնովն փառաւոր կերպով իրան յայտնել է — և այն ազգերն, որ, մեր մեռնելուց հազարաւոր տարիներէից յետոյ, այս երկրագնդիս վրայ կընակեն, Աստուծոյ այսպէս յայտնուելովը մեզանից աւելի պարզ ու պայծառ կերպով կըհասկանան:

Այսպիսի փորձառութիւններից ու պատմութեան վկայութիւններից յետոյ՝ եթէ որ էլ չես կասկածուում, որ ամեն բան կառավարող Աստուծոյ ձեռքը կայ ազգերի ու մարդոց ունեցած վիճակին մէջ, նրա վսեմ նպատակների բարի լինելու մէջ, — էլ ինչո՞ւ համար ես տխուր կանգնել ու զանգատուում այն ժամանակի վրայ, որոյ մէջ ապրում ես: Ազգերն ու իրանց վրայ իշխողները մի բան ունում են այն հանգամանքներին մտիկ տալով, որ վաղանցուկ բոպէն իրանց ցոյց է տալիս. բայց թէ նրանից յետոյ եկող բոպէն ինչ պիտի բերի իրանց, այդ բանը հաշուի տակ քցել չեն կարող: Իրանց խելօքութիւնն ունայն է, երբոր բողբաւորութիւնն էլ հետը չի օգնում. և այս բաղդաւորութիւնն՝ Աստուծոյ կարգադրութիւնն է, ոչ թէ դիպուածի խազն:

Աշխարհիս մէջ պատահած չար բանն էլ Աստուծոյ ձեռիցն է գալիս: Ինչպէս որ մի մասնաւոր մարդու կեանքի մէջ՝ կամ մի ընտանեկցի մէջ՝ փրկութեան օրեր կան, այսպէս էլ ազգերի կեանքի մէջ, որ շատ անգամ միրկի սաստկութիւնով գալիս են իրանց վրան: Սուրբ ազդարարութիւններ են այս փորձանքներն, որ մի ազգ շատ հաստատ կերպով յոյսը չզնի ժամանակի բարեքի վրայ: Ո՛չ երկրի պողաբերութիւնն, ո՛չ առուտուրի ծաղկած վիճակն, ո՛չ արտաքին խաղաղութիւնն, ոչ էլ մի երկրի շատ լաւ կազմակերպութիւնն և իմաստուն կառավարութիւնն է հիմնաւոր անում մի տէրութեան բաղդաւորութիւնն այլ միայն ազգի առաքինութիւնն ու նրա ապաքինիչ Աստուծոյ: Այն բո-

լոր արտաքին առաւելութիւններն, որ կան, կարող են երկար չքաշել՝ ու մի օր ոչ միայն խանգարուել, այլ և շատ շուտ բոլորովին ոչընչանալ։ Ինչու որ ժամանակի պարգևներն են ու հանգամանաց լիճակին էլ ենթարկուում են։ Այսպէս է որոշուած Աստուծոյ խորհրդի մէջ, և երանի այն ազգին, որ փոքիւն թեան կրակի մէջ իւր կեդտերիցը կմաքրուի՝ և այդ բովիցն ազնուացած դուրս կգայ։

Աստուծոյ յայտնուիչն կամ յայտնածը մեզ, որ հասկանում ենք աշխարհի պատմութիւնից, մեզ սովորեցնում է թէ՛ մենք, իբրև իմաստուններ՝ ամեն փոփոխութիւնների մէջ ինչից պէտք է վախենանք և ինչ բանի յոյս ունենանք։ Մենք աշխարհիս պատմութիւնից սովորել ենք, որ ոչ մի բան երկարատև չէ, բացի ճշմարիտ ու բարի բանից. որ ամեն պակասաւոր բան փչանում է, եթէ որ միլիոնաւոր զինաւորուած զօրկաններ էլ վրան հսկէին ու պահանջէին. թէ աշխարհիս մեծամեծ տէրութիւնները վերջապէս պէտք է կործանուին, երբոր քաղաքակիցները մարմնապաշտութիւնով մեկկացած, թուլացած, բոլորի բաղաւորութիւնն իրանց սեպհական բարիքը չեն համարում, այլ իրանց ինքնասիրութեան իրանց շահը պտուելու վրայ՝ մոռանում են հասարակաց բարիքն ու գերութիւնն աւելի տանելի են համարում, քան թէ հայրենիքի համար իրանց կեանքը զոհելը։ Մենք սովորեցինք ազգերի գլխին եկածներից, որ առաքինութիւնով և մէկի՝ ամենի համար իւր անձը զոհելովը հասարակագուտ գործում, որպէս և բոլորի՝ մէկի համար նոյն կերպով մտածելն ու գործելը՝ փոքրիկ տէրութիւնները զօրացել են. և ընդհակառակն՝ բնակիչների մոլութիւններով՝ զօրեղ տէրութիւնները քայքայուել, քանդուել են։ Ինչո՞ւ ենք գանգատուում այս ու այն բանի վրայ, որ փչացաւ՝ չէնց մեր իսկ պակասութիւնից ու մեր թուլութիւնովը չէ՞ր, ինքնբեր պատճառ չեղա՞նք շուտ փչանալուն։ Ինչո՞ւ ենք շատ անգամ յոյսներս կտրում, որ բաղաւոր օրեր գեռ էլի կունենանք։ Մի՞թէ մեր ամենի միացած առաքինութիւնն, երբ որ մի ամբողջ ազգ ընդունակ լինէր մի առաքինութիւն ունենալու, չէր կարող շատ բան մինչև ցայժմ եղածից աւելի գեղե-

ցիկ կերպով աշխարհի առաջը հանել: Մի՞թէ Աստուած բարւոյ Աստուած չէ, կամ մի՞թէ նրա զօրութիւնը տկարացել է:

Ուրեմն սիրտ առէք: Միտքներդ բերէք ամենակարող Աստուծուն, ու միացէք աւելի ազնիւ մտքեր ունենալու, այրական քաջութիւնով: Ինչպէս Ծաղի մորգարէն ատումէ, «Յաւիտեան Տիրոջը վրայ յայաներդ գրէք, ինչու որ Տէրն ու Աստուածը յաւիտեանս վէմ է»: Ինչու որ նա է բարձր տեղերում՝ բնակուողներին խոնարհեցնում. նա է բարձր քաղաքը ցածրացնում, մինչև գետինը ցածրացնում, հողի հետ հաւասար անում, որ ոտնակոխ լինի աղքատների ոտերուն ու չքաւորների գարշապարովն:

Ոչ որ, իրան աւելի խելօք համարելով, իշխանութիւն ձեռքն ունեցողի արածը չպարսաւի, չդատապարտի: Ոչ որ քննիչ չկարգի ինքն իրան ու չքննի նրանց արած կարգադրութիւններն ու տուած վճիռներն, առանց իմանալու ամեն հանգամանքների ոյժն, որից թելադրուած կամ ստիպուած, վճռել են, որ այս կամ այն բանը լինի կամ կատարուի. աւելի լաւ է, որ ամեն մի մարդ դատի իւր իսկ արածները:

Իսկ որ իշխանութիւնը պարսաւում ես ու հսոյհոյում անամօթ կերպով և նրա կարգադրութիւնները պախարակում, իբրև թէ նրանց խորհրդին նուիրուած ոմն լինելիք գու որ նրանց արածի վրայ ծուռ աչքով ես մտիկ տալի, իբրև թէ մեծ վնասի ու կորստի պատճառ են, առաջ ինքդ քեզ հարցուր թէ՛ ես ինչ եմ արել իմ քաղաքակիցներիս, իմ հոյրենիքիս բարեւաւութեան համար: Արդեօք առանց ինքնաւերութեան ու սնուփաւութեան օգնել եմ պահպանելու իմ բնակատեղիս հաստատութիւններն, որ ծաղկած վիճակի հասնեն: Արդեօք ես առաջինն եղել եմ, որ օրինակ եմ տուել սիրով և ուրախութեամբ օրէնքներին հնազանդելու ու իմ քաղաքակիցներին էլ յարգորել եմ, որ նայն անեն: Արդեօք միշտ սանձել եմ իմ կիրքս և ամեն մի կուսակցութիւնից հեռու եմ ինձ պահել, և իմ ազդեցութիւնս այն տեղ գործ անել, որ կուսակցութիւնների բաժանուածներին հասարակաց բարւոյն համար միացնեմ, իրարից բաժանուած, հեռացած քաղաքակիցներին

Հաշտեցնեմ՝ և ամենին էլ ազատութեան սուրբ գործի համար սգեւորեմ: Արդեօք ես առաջինն եմ եղել, որ վարք ու բարքի պարզութեան զգալի օրինակ տուած լինիմ՝ և առաքինութիւնը՝ փողից, ինչքից ու կեանքից աւելի սիրել եմ:

Իսկ որ ուրիշներին դատում ես, առաջ ինքդ քեզ դատիր: Եւ երբ որ չես կարող գու ինքդ քս առաջդ կանգնել, զգուշացիր քո դատապարտութեան վճիռն ուրիշներին վրայ տալու:

Ես պէտք է էլի դառնամ Յիսուսի իմաստութեանն՝ և այն առաքինութիւններովն, որ գործ եմ գնում Աստուածանից ինձ տուած իմ մեծ կամ՝ փոքր գործունէութեան շրջանիս մէջ՝ օգնեմ հասարակաց կարգի պահպանութեանը, խաղաղութեանը, հանգստութեանն ու միաբանութեանն, և եղբայրակիցներին համար ամեն բան զսոց սիրոյ հաստատութեանն: Այս բանին պիտի յորգորեմ ու սիրտ տամ նրանց, սրտնք որ իմս են, այս բանի մէջ պիտի մեծացնեմ՝ լուրջ կերպով իմ գաւակներին: որ Աստուած ինձ պարգևել է:

Բարի բանը կ'մնայ, չի խանգարուիլ, չի փչանալ. միայն պակասաւոր բանը կաւերուի, կոչընչանայ: Այս բանն են ինձ սովորեցնում Աստուծոյ յայտնութիւններն ազգերի ունեցած վիճակների մէջ: Սորա համար ես էլ ուրիշներին հետ միասին գործ կատարեմ՝ առանց կողմնապահութեան՝ միայն բարի և ուղիղ բանի համար, որ տեղ որ կարող եմ: Այսպէս կարող եմ ես յուսալ, որ իմ փոքրիկ գործերս էլ Աստուծոյ օրհնող տնօրէնութիւնովը մի լումայ կ'լինին աշխարհիս բարւոյն համար. այսպէս են օգնում իմ տկար ուժերս Աստուծոյ մեծ քաղաքը երկրիս վրայ հաստատելու:

Այն մարդկային ազգի Հայր. Իսկ տեսնում ես մեր յանցանքը. բայց մինչև անգամ կորուստն էլ, որ մեր յանցանքիցն է յառաջ գալիս մեզ և մեր զաւակների համար՝ Քո իմաստութիւնովդ ի բարին պիտի ծառայի: Սարոսփելով մոլութեան չարքից, որին որ մենք ծառայում ենք, ազատում ենք մեզ, կրկին փախչելով առաքինութեան գիրկն՝ և այն թշուառութիւնիցն, որ մեր կրքերն մեզ պատճառեցին, ընկնում ենք երջանկութեան մէջ, որ Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւ-

նիցն է մեզ համար բոլորում: Դու կամենում ես ո՞վ Աստուած, մարդկային ազգի կատարելութիւնը, միաբանութիւնն ու խաղաղութիւնը: Այդ նպատակն ունին Քո մեծ տնօրէնութիւններն երկրագնդի ընտելչների կեանքումն եղած իրողութիւնների մէջ: Երանի թէ մենք այս Քո յայտնութիւններդ հասկանայինք, բայց աւանդ, շատ անգամ չենք հասկանում: Եւ մեր միմեանց չընդունելն իբրև միևնոյն մարմնոյ անդամներ, և միշտ աշխատելն, որ մեր ինքնասիրութիւնն ու մեր կրքերն իրանց զսհերն ունենան՝ ազգերի քաշածների միակ ազբիւրն է:

Այսուհետև հեռու լինի ինձանից տրտնջելը. Քո ինձ համար արած կարգաւորութիւնից. հեռու լինի ամեն մի կասկած, որ օգտակար են Քո տնօրէնութիւններդ ազգերի ունեցած միջակների համար, որ ուղղուին: Մեր մեղքի մէջն է մեր դատաւարութիւնն, մեր առաքինութեան մէջն է մեր ոյժն ու մեծութիւնն: Առաջնորդիք մեզ, ո՞վ Տէր, Քո անքննելի խորհրդովդ և վերջապէս ընդունիր մեզ իբրև ոչ բոլորովին Քո անարժան զաւակներդ:

Գ. Ե. Ա.

### ՓՈՔՐ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

«Որ է քորուն հաւատարիմ է, եւ է բողոմի հաւատարիմ է» (Ղուկ. ԺԶ. 10):

Երբ մենք, սուշի ուշով, մտիկ ենք տալիս Աստուծոյ գործոց վրայ՝ դրանք մեզ երևում են միշտ երկու, միաջափ զարմանալի, տեսակով—անհուն մեծութիւն և անհուն փոքրութիւն:—Մի կողմից՝ տիեզերքի անեզր և անսահման տարածութիւն, որ ոչ մի թուանշանով կարելի չէ արտայայտել և որոյ հանգէպ՝ ամենալաւ երևակայութիւնն անգամ շճմովում է. և անփախձան դարեր, որոնք յաւիտեանս ժամանակաց փոխանակում են միմեանց, Իսկ միւս կողմից՝ կեանքի ոչ նուազ զարմանալի երևոյթ—կեանքի, որ իւր բնոր հրաշքներով, բացվում է մեր